

ԲԱՆԱԽՈՍ


ՓԵՏՐՎԱՐԻ 21, 1997 ԹՎ.

ԹԻՎ 5

Չ Ո Ր Ե Բ Ը Ա Ր Թ Ի , Փ Ե Տ Ր Վ Ա Ր Ի 1 2

ՆԱՏՕ-Ն ՀԵՏԱՍԱՌՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՉԱՆՈՒՄ

ԽԱՎԻԵՐ ՍՈԼԱՆԱ
ՆԱՏՕ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԶԱՐՏՈՒՂԱՐ



Ինձ համար մեծ հաճույք է լինել Հայաստանում: Մա մի երկիր է, որը սերտ կապեր ունի Ատլանտյան օվկիանոսի երկու ափերում գտնվող դաշնակից տերությունների հետ, սահմանակից է Դաշինքի անդամ երկրներից մեկին: Այն փաստը, որ ես այսօր խոսում եմ Հայաստանի ամերիկյան համալսարանում, արդեն վկայում է, որ արժեքների եվրոպականատիկ համակարգը չի սահմանափակվում միայն ՆԱՏՕ-ի սահմաններով: Վերջին տարիների խիստ դրական նվաճումներից մեկն այն է, որ կործանվել են համագործակցության խոչընդոտները, անհետացել՝ գաղափարախոսական տարանջատումները:

Արժեքների համընդհանրությունը շատ ավելի ընդլայնվել է 90-ականներից ի վեր: Այժմ, երբ Եվրոպան մասնատված չէ, մեզ ընձեռվել է եվրոպական համագործակցության և կայունության տարածաշրջան ձևավորելու մի քաջառիկ հնարավորություն, տարածաշրջան, որտեղ յուրաքանչյուր երկիր իր ասելիքն ունի և նրանցից ոչ մեկը իրեն վտանգված չի զգա: Ես հավատացած եմ, որ քաղաքական մթնոլորտը միանգամայն բարենպաստ է այս պատվախնդիր նպատակներին հասնելու համար: Նոր ժողովրդավարացած պետությունները ցանկանում են համախմբվել եվրոպական հաստատություններում և մասնակցել իրենց ճակատագիրը ձևավորող գործընթացներին: Նոր Եվրոպայի գլխավոր բնութագիրը, քերևս, նրա բազմազանությունն է, սակայն նրա ներուժը միասնությունը գիտակցելու աճի մեջ է:

«Մինչև 1999 թվականը մենք կունենաք ավելի քննդայնված ՆԱՏՕ:»

Այսպիսով, միանգամայն բնական է, որ 1994-ի հոկտեմբերին Հայաստանը միանալով Գործընկերություն համուն խաղաղության դաշնագրին, նախաձեռնեց ՆԱՏՕ-ի հետ համագործակցության իր ուրույն ծրագիրը: Հայաստանի մասնակցությունը ԳՀԽ-ին ուղղակի կապ զարգացրեց ՆԱՏՕ-ի հետ:

Իմ այսօրվա այցելությունը պետք է բնութագրվի որպես Հայաստանի և կովկասյան մյուս երկրների հետ մեր կապերի արժեքավորման խորհրդանիշ: Այս շրջան իմ այցի առնչությամբ վերջին երկու օրվա ընթացքում որոշակի մտահոգություններ եմ լսել: Թույլ տվեք հստակեցնել, որ այստեղ իմ գալու նպատակը հեռու է բաժանման գծեր, անջրպետներ ստեղծելուց և բոլորովին մտադիր չեմ եղել խառնվել որևէ տարածաշրջանային հարցերի: Դառնալով գլխավոր քարտուղար, որոշեցի այցելել ՆԱՏՕ-ին դաշնակցող Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, ինչպես նաև Կենտրոնական Ասիայի բոլոր 27 երկրները: Ես շատ ուրախ եմ այսօր Երևանում լինելով՝ դրանով իրականացնելով ինքս ինձ տված խոստումը: Այստեղ գալու իմ նպատակը նույնն է, ինչ ՆԱՏՕ-ի գործընկեր մյուս երկրներ. բնարկել, քե ինչպես կարող ենք զարգացնել մեր արդեն գոյություն ունեցող համագործակցությունը»

(շարունակությունը՝ էջ 2)

ցությունը Գործընկերություն հանուն խաղաղության շրջանակներում: Մենք ուզում ենք շարունակել, ավելի խորացնել այդ հարաբերությունները: Իսկապես, ՆԱՏՕ-ի հետ համագործակցության հնարավորությունները անսպառ են: ՆԱՏՕ-ի կողմից մենք խանդավառությամբ կողջունենք Հայաստանի աշխուժացող ներգրավվումը համագործակցության մեր ծրագրերի բոլոր ուղղություններում:

Հայաստանի աշխարհագրական դիրքը գուցե հեռու է Բրյուսելից, բայց նրա մտահոգություններն ու շահերն այնքան էլ հեռու չեն: Կովկասյան տարածաշրջանը կարևոր շրջան է Եվրոպայի համար, այստեղ կա իրականացվելիք սոցիալական և տնտեսական ներուժ, պայմանով, որ անվտանգության խնդիրները լուծվեն խաղաղ ճանապարհով, ԵԱՀԿ սկզբունքների ու պարտավորությունների համաձայն: Եվրոպան չի կարող իրեն ամբողջովին անվտանգ զգալ կամ իրականացնել իր ողջ ներուժը, քանի դեռ կովկասյան երկրները դուրս են մնում Եվրոպական անվտանգության բանաձևի սահմաններից:

Ահա թե ինչու կովկասյան երկրները չպետք է ինքնամեկուսանան: ՆԱՏՕ-ի և այլ հաստատու-

բյուրների հետ համագործակցության մեծ հնարավորություններ կան, որոնք պետք է գործադրել:

Սակայն, կարևոր է նշել, որ անվտանգությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ կայունություն լինի և՛ Եվրոպայում, և՛ հարակից շրջաններում: Դա պահանջում է միջազգային վարքի բարձրագույն չափանիշների պահպանում, այդ թվում՝ հարգանք ազգային փոքրամասնությունների իրավունքների, բոլոր երկրների տարածքային ամբողջականության նկատմամբ և բոլոր վեճերը խաղաղ ճանապարհով լուծելու ամուր դիրքորոշում:

Այս չափանիշները սահմանվել են ԵԱՀԿ-ի կողմից և վերաբերում են եվրոպական բոլոր երկրներին, կազմակերպություններին ու տարածաշրջաններին: Այդ չափանիշներին միլիթանտությունը առավել ամրապնդվում է ՆԱՏՕ-ի հետ համագործակցության Գ-ՀԽ շրջանակներում:

Թույլ տվեք ավելի մանրամասն ներկայացնել ՆԱՏՕ-ի առանձնահատուկ ներդրումը համագործակցված անվտանգության ձեռքբերման գործում: Ե՛իշտ այնպես, ինչպես Հայաստանի ու ՆԱՏՕ-ի հարաբերություններն են որոշ զարգացում ապրել վերջին տարիներին,

բին, այդպես էլ այդ նույն ժամանակաշրջանում ՆԱՏՕ-ն ինքը որոշակիորեն փոփոխվել ու հարմարվել է: Անվտանգության մեր միջավայրում կարիք կա անվտանգության նկատմամբ մեր մոտեցման: Վերջին տասնամյակի ընթացքում Դաշինքը հիմնավոր փոփոխություններ է կատարել իր տեսակետների, քաղաքականության մեջ՝ հիմնվելով մեր ռազմավարական հիմնադրույթին: Եթե անցյալում մեր մտահոգությունը անդամ երկրների պաշտպանությունն էր, ապա այժմ մեր նպատակն է անվտանգության զգացողության հասնել մեր սահմաններից դուրս:

Իհարկե, Դաշինքի անդամների անվտանգությունը մնում է մեր գլխավոր խնդիրը: Սակայն նաև գիտակցում ենք, որ մեր անվտանգությունը անխզելիորեն շաղկապված է այն երկրների անվտանգության խնդիրների հետ, որոնք գտնվում են մեր տարածաշրջանում և մեր արժեքների ծիրում: Այլ երկրների և հաստատությունների հետ համագործակցությունն ու երկխոսությունը, այսպիսով, դարձել է մեր անվտանգության մեր քաղաքականության առանցքային խնդիրը: Համագործակցությունը մեր երկրորդական գործունեության բնագավառներից չէ բնավ,

(շարունակությունը էջ 3)



ՆԱՏՕ-ի 54-ամյա գլխավոր քարտուղար Խավիեր Սոլանա Մադարիգան ծնվել է Իսպանիայում, ուսուցչի ընտանիքում: Նա Իսպանիայում հայտնի գրող և իսպանագետ Սավադոր դե Մադարիգայի զարմիկն է: Նրա ավագ եղբայրը ձերբակալվել է ֆրանկոյականների կողմից՝ սոցիալիստներին հարելու համար:

Խավիեր Սոլանան ստացել է ֆիզիկոսի կրթություն: Որպես նախկին մարքսիստ, նա դեմ է եղել ՆԱՏՕ-ին Իսպանիայի անդամակցությանը:

1963 թվականին իր քաղաքական հայացքների համար հեռացվել է Մադրիդի համալսարանից: Ընտանեկան կապերի շնորհիվ նրան հաջողվում է կրթությունը շարունակել սկզբում Հոլանդիայում, այնուհետև Անգլիայում և ԱՄՆ-ում: Այստեղ նա ստանում է ֆիզիկայի դոկտորի կոչում: 70-ական թվականների սկզբներին վերադառնում է հայրենիք, գրում ավելի քան 30 գիտական աշխատություն, աշխուժորեն համագործակցում սոցիալիստների հետ: Ֆրանկոյի մահից հետո Սոլանան ընտրվում է խորհրդարանի անդամ և դառնում սոցիալիստների ղեկավար Ֆիլիպե Գոնսալեսի վստահված անձը:

Սոցիալիստների կառավարման օրոք Սոլանան դառնում է մշակույթի նախարար և կառավարության խոսնակ, այնուհետև կրթության նախարար: 1992 թվականին նա նշանակվում է արտգործնախարար:

Այդ տարիներին Սոլանան բազմաթիվ շփումներ է ունենում արևմտյան և համաշխարհային դիվանագետների, այդ թվում նաև ԱՄՆ-ի պետական քարտուղար Ուորեն Զրիստոֆերի հետ: Սոլանայի՝ որպես արտգործնախարար պաշտոնավարության տարիներին Իսպանիան դառնում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամ:

ՆԱՏՕ-ի նախկին գլխավոր քարտուղար, բելգիացի Վիլլի Կլեսի պաշտոնանկ լինելուց հետո Խավիեր Սոլանան 1995 թվականին ստանձնում է այդ պաշտոնը:

այն կազմում է մեր արած ամեն ինչի հիմքը: ՆԱՏՕ-ի գործունեության արդյունքները, որոնք ստեղծվում են Եվրոատլանտիկ տարածաշրջանում, տարածվում են նաև Կովկասում:

Օրինակ, վերցնենք Հյուսիսատլանտյան համագործակցության խորհուրդը, որը կազմավորվեց 1991 թվականի դեկտեմբերին՝ որպես ՆԱՏՕ-ի և նախկին Վարշավյան համաձայնագրի երկրների, այդ թվում նաև նախկին ԽՍՀՄ նորանկախ հանրապետությունների միջև մնացորդային տարակարծությունները վերացնելու գործիք: Այս նախաձեռնության հիմքում ընկած էր դաշնակիցների ձգտումը կիսելու իրենց կուտակած փորձը, փորձագիտական հմտությունները, օգնելու այն երկրներին, որոնք գտնվում են կայացման ճանապարհին, որոնցից ոմանք առաջին անգամ են նախաձեռնում ազգային անվտանգության և պաշտպանության նախարարությունների ստեղծումը: Հենվելով ՆԱՏՕ-ի անդամ երկրների հարուստ փորձին, ստեղծված պահին հարմար օգնություն կարելի է ցուցաբերել այդ երկրների բարեփոխիչ գործընթացներին, հատկապես՝ ռազմական հարցերում գործնական խնդիրների շուրջ, որոնք առնչվում են ժողովրդավարական հասարակություններում վերահսկիչ զինվորական ուժերի կազմակերպմանը:

Այժմ, երբ համագործակցության խորհրդի անդրամիկ միտից անցել է ավելի քան հինգ տարի, գործընկերների թիվն ավելացել է շուրջ երեք անգամ, և 1994 թվականի հունվարին հաստատվել է Գործընկերություն հանուն խաղաղության պակտը: Չափազանցություն չի լինի ասել, որ Դաշնագիրը ռազմական համագործակցության ամենախտացված ծրագիրն է, որը երբևէ եղել է: Այժմ այն համախմբում է 16 դաշնակիցների և ԵԱՀԿ անդամ կողմնացույցի բոլոր չորս կողմերում ընկած 27 երկրների և կիրարկում է անվտանգության ավանդույթների մի ամբողջություն, այդ թվում՝ չեզոքության դիրքորոշումը:

ՆԱՏՕ-ի հետ համագործակցության գործընթացը, որին միացել է նաև Հայաստանը, քարացած չէ: Ժամանակի ընթացքում հնարավորություններն ու հեռան-

կարները զգալիորեն մեծացել, ընդլայնվել են և դեռ կշարունակեն աճել:

Ընթացիկ տարվա հուլիսին կկայանա ՆԱՏՕ-ի գագաթաժողով, ուր կկայացվեն մի շարք կարևոր որոշումներ, այդ թվում՝ ՆԱՏՕ-ի ու նրա գործընկերների փոխհարաբերությունների հետագա քայլերի վերաբերյալ:

Որոշումներից մեկը կվերաբերի Դաշինքի հետ մի շարք երկրների՝ ընդլայնված բանակցությունների հրավիրելուն: Մեր նպատակն է ողջունել նոր անդամներին մինչև 1999 թվականը, այն տարին, երբ կնշենք ՆԱՏՕ-ի 50 ամյակը:

«Դաշինքը ոչ պատճառ, ոչ մտադրություն և ոչ էլ ծրագրեր չունի ՆԱՏՕ-ին նոր անդամակցած երկրների տարածքներում միջուկային զինակայաններ տեղադրելու:»

ՆԱՏՕ-ի ընդլայնումը, այսպիսով, պետք է դիտվի ճիշտ մույն տեսանկյունից, ինչ Եվրոպական միության ծավալման գործընթացը. Եվրոպայի կառուցվածքային բնական զարգացումը ներգրավում է այն երկրները, որոնք ի վիճակի են այդ համակարգում ազատ իրականացնել իրենց կարևոր դերը:

Մինչև 1999 թվականը մենք կունենաք ավելի ընդլայնված ՆԱՏՕ: Կուզեի հավաստիացնել, որ ՆԱՏՕ-ի ընդլայնման գործընթացը ավելի կօգնի ողջ Եվրոպայում անվտանգության և կայունության խորացմանը, ավելի ամրապնդելով ԳՀԽ-ն՝ երկարատև կապեր կհաստատենք բոլոր գործընկերների հետ:

ԳՀԽ-ի ուժեղացման ընթացքում գործընկերները ցանկության դեպքում հնարավորություն կունենան սերտորեն ներգրավվել ՆԱՏՕ-ի ռազմական և պաշտպանության համագործակցության տարբեր բնագավառներում: Այս նոր՝ «ԳՀԽ +»-ում, անդամակցության ձգտող երկրները ի վիճակի կլինեն արագացնելու պահանջվող նախապատրաստական աշխատանքները:

Մյուս գործընկերների համար «ԳՀԽ +»-ը լրացուցիչ վստահություն կստեղծի, որպեսզի նրանք սերտացնեն կապերը ընդլայնված Դաշինքի հետ: Դաշնակիցների հետ միասին մենք աշխատում ենք նաև Ատլանտյան դաշնության խորհրդի հաստատման նախաձեռնության վրա՝ որպես մեր համագործակցության հաստատումը բոլորող մի աշխատանքային փուլի: Մենք նպատակ ունենք ամրապնդելու Դաշնության քաղաքական տարածաչափը և ապահովելու քաղաքական անվտանգության երկխոսության ավելի ազատ ու կանոնավոր ընթացք:

ՆԱՏՕ-ի արտաքին հարմարվողականությունն ուղղված է այն օժանդակության տարրերի կատարելագործմանը, որոնք Դաշինքը կարող է տալ Եվրոպայի անվտանգության նոր կառուցվածքին: Մի կառուցվածք, ուր ներգրավված կլինեն բոլոր ազգերը: Դա վերջնական մի միջոց է՝ ուղղված կայունության և անվտանգության խորացմանը ողջ Եվրոպայում, ներառյալ այնպիսի երկրներ, ինչպիսիք են Ռուսաստանն ու Ուկրաինան:

Մենք գիտենք, որ վերջ ի վերջո, առանց Ռուսաստանի ի վիճակի չենք լինի Եվրոպայում հասնել անվտանգության խորացման, մույնիսկ՝ եթե դիմակայենք միայն նրան: Ուկրաինան իր չափերից և ռազմավարական դիրքից ելնելով, ուրույն հարաբերություններ է տեսնում ՆԱՏՕ-ի հետ: Հուսով ենք, որ Ուկրաինայի հետ համագործակցություն կհաստատենք առաջիկա ամիսների ընթացքում:

Մենք նաև նշանակալի ջանքեր ենք գործադրում ԳՀԽ-ում Ռուսաստանը ներգրավելու և նրա հետ ավելի լայն շրջանակներում ընդլայնված համագործակցություն ու խորհրդատվություն հաստատելու ուղղությամբ: Ռուսաստանը ցուցաբերում է որոշակի հետաքրքրվածություն, սակայն, մենք դեռ պետք է հաղթահարենք ՆԱՏՕ-ի վերաբերյալ այն թյուր ըմբռնումներն ու կանխակարծությունները, որոնք դեռևս գերակայում են որոշ առաջնական մտածողների մոտ: Այդ խոչընդոտները հաղթահարելու համար պետք է դրանց անդրադառնալ նախօրոք, ազնվորեն և ի սրտե:

(շարունակությունը՝ էջ 4)

Առաջին հերթին պետք է նշել, որ այսօրվա ՆԱՏՕ-ն վտանգ չի ներկայացնում Ռուսաստանի համար: Կարող եմ վստահեցնել, որ ոչ էլ ընդլայնված ՆԱՏՕ-ն դա կանի: Հյուսիսատլանտյան խորհրդի կողմից նիստում մենք հստակորեն հայտարարել ենք, որ Դաշինքը ոչ պատճառ, ոչ մտադրություն և ոչ էլ ծրագրեր չունի ՆԱՏՕ-ին նոր անդամակցած երկրների տարածքներում միջուկային զինակայաններ տեղադրելու: Սովորական սպառազինությունների բնագավառում մենք արդեն ցուցաբերել ենք CFE համաձայնագրի հարմարեցման հարցը լրջորեն քննարկելու պատրաստակամություն՝ ուշադրության կենտրոնում առնելով Եվրոպայի անվտանգության միջավայրի զարգացումը: Այս նշանակալի հարցերից առավելապես ընդգծել ենք մեր պատրաստակամությունը՝ համաձայնության գալու ՆԱՏՕ-ի և Ռուսաստանի միջև մշտական և պաշտոնական հարաբերությունների հաստատման ռեժիմի շուրջ: Ինչպես գիտեք, այս խոսակցությունները սկսվել են դեռևս հունվարին, երբ ես հանդիպեցի արտգործնախարար Պրիմակովի հետ, և շարունակվում են մինչև հիմա:

Ոչ ՆԱՏՕ-ի ընդլայնումը, ոչ ԳՀՆ-ի ուժեղացման մեր գաղափարները, ոչ էլ Ռուսաստանի և ՌԻԿրաի-նայի հետ ամուր ու երկարատև հարաբերություններ հաստատելու մեր ցանկությունը չպետք է մեկուսացված դիտվեն: Այս բոլոր նախաձեռնությունները մտնում են ընդհանուր փաթեթի մեջ: Դրանք բոլորն էլ լրացուցիչ ամրացնող ազդեցություն կունենան Եվրոպայի անվտանգության որակի բարելավման վրա, այդ թվում՝ կովկասյան տարածաշրջանի:

Թույլ տվեք շեշտել, որ ՆԱՏՕ-ի նոր անդամների ընդունման գործընթացը դրական ազդեցություն կու-

նենա Եվրոպայի անվտանգության և կայունության ամրապնդման գործում: ՆԱՏՕ-ին անդամակցող նոր երկրները կպարտավորվեն նույն դրական, բարեկամական և կառուցողական դիրքորոշումն ունենալ Ռուսաստանի և այլ գործընկերների նկատմամբ, ինչպիսին այսօր է: Այսպիսով, 1999 թվականին, երբ ակնկալվում է, որ նոր անդամներն իրենց տեղերը կգրադեցնեն ՆԱՏՕ-ի նիստերի սեղանի շուրջ, նրանք կդառնան Եվրոպայում ամենալայն իմաստով անվտանգության աշխույժ շատագույներ:

Կուզեի անդրադառնալ մեկ այլ համագործակցական նախաձեռնության՝ սպառազինության վերահսկմանը: Մենք պետք է ունենանք սպա-

«Առանց Ռուսաստանի ի վիճակի չենք լինի Եվրոպայում հասնել անվտանգության խորացման, նույնիսկ եթե դիմակայենք միայն նրան:»

ռազինության վերահսկման արդյունավետ մի համակարգ, ինչը կպատասխանի այն հարցերին, որոնք ծագում են վախի և ռեակցիայի առկայության պատճառներով՝ կապված սովորական սպառազինության ոչ անհրաժեշտ արտադրության և կուտակման հետ: CFE համաձայնագրի ակնկալվող հարմարեցումը շատ կարևոր նշան կլինի այն բանի, որ համաձայնագիրը ստորագրող նոր երկրները կկարողանան քարձակել այն պահանջներով առանցքային տարրերը և անվտանգություն ապահովելով յուրաքանչյուրի համար: Նախատեսվելիք բանակցություններում պետք է հաշվի առնել կովկասյան տարածաշրջանի

շահերին ծառայող նորացված համաձայնագրի հաստատման կարիքը:

Այն, ինչ փորձեցի լուսաբանել, դա ՆԱՏՕ-ի համար կովկասյան տարածաշրջանի և, մասնավորապես, Հայաստանի կարևորությունն է և այստեղ համագործակցության զարգացում տեսնելու մեր ցանկությունն այնպես, ինչպես այն զարգացրել ենք ողջ Եվրոպայում: ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունները պետք է դիտել որպես հարաշարժ, ընդլայնվող կապեր: ՆԱՏՕ-ն փոխվել է, սակայն փոփոխման գործընթացը դեռ շարունակվում է:

ՆԱՏՕ-ի՝ հուլիսին կայանալիք զագաթաժողովը ի հայտ կբերի ներքին և արտաքին հարմարվողականության մի շարք նախաձեռնություններ, որոնք ընդհանուր առմամբ կհանգեցնեն ավելի ընդգրկուն դաշնագրի, զագաթաժողովը կհանգեցնի մի դաշինքի, որն ավելի լավ պատրաստված կլինի մեր մայրցամաքում կայունություն պահպանելու համար և կամրապնդի համագործակցությունը ողջ Եվրոպայում: Հայաստանի համար հնարավորություններն էլ ավելի կընդլայնվեն:

Անշուշտ, կովկասյան տարածաշրջանն իր ուրույն առանձնահատկություններն ու հարաշարժումն ունի: ՆԱՏՕ-ն չունի որևէ հրաշագործ լուծում ոչ այս տարածաշրջանի, ոչ էլ ողջ Եվրոպայի հիմնախնդիրների լուծման համար: Սակայն, մեր քաղաքականությունների հաջողությունը համագործակցության և սպառազինությունների վերահսկման գործում ուժեղացնում է անվտանգությունը բոլորիս համար: Ավելին, միասնական գործող Եվրոպայում այնպիսի երկրներն, ինչպիսին Հայաստանն է, պետք է ունենան իրենց ուրույն տեղն ու խոսքը: ՆԱՏՕ-ի զարգացումը միայն կնպաստի այս հնարավորությունների իրականացմանը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

- Ինչպե՞ս կխրախուսեք Թուրքիային՝ բացելու համար Հայաստանի հետ իր սահմանը, որով ներդրում կլինի Գործընկերություն հանուն խաղաղության ծրագրի հաջողությանը:

- Այն խնդիրները, որոնք կանգնած են ձեր երկրի առջև, այդ իրավիճակը, որ ստեղծված է Թուրքիայի հետ սահմանամերձ շրջանում (այսօր ես հնարավորություն ունեցա կա-

ռավարության անդամների հետ խոսել այդ հարցերի շուրջ) պետք է լուծվեն այնպիսի երկրի մասնակցությամբ, ինչպիսին Թուրքիան է: Մենք ոչինչով չենք կարող միջամտել: Ես գիտակցում եմ, որ դժվարություն կա այսօր: Դա պետք է լուծվի խորհրդարանի, կառավարության և բոլոր առնչվող կողմերի մասնակցությամբ:

(շարունակությունը էջ 5)

- Ճիշտ է արդյոք, որ ՆԱՏՕ-ի սենյակներից մեկի ժամանակ քննարկվել է Կասպից ծովի աղբյուրներին հատկապես ՆԱՏՕ-ի ռազմածովային և ռազմական ուժերի տեղադրման հարցը:

- Այդպիսի քննարկում դեռևս չի եղել: Անկեղծ ասած, ես չեմ կարող պատասխանատվություն կրել այն հարցերի համար, որոնք քննարկվել են սենյակներում: Նման բան չի քննարկվել խորհրդում:

- Ռուսաստանի անվտանգության խորհրդի քարտուղար Իվան Ռիբկինը հայտարարել է, որ իր երկիրը կարող է առաջինը օգտագործել միջուկային զենք այն դեպքում, երբ լինի ագրեսիա: Սա աշխույժ քննարկումներ առաջացրեց: Չէի՞ր կարող տալ Ձեր մեկնարանությունը:

- Ռուսաստանում կարևոր պաշտոնյաների համար, ըստ իս, սա այնքան էլ իմաստալից որոշում չէ: Մենք բոլորս կվորձենք որոշումներ չկայացնել այդ տարածաշրջանում: Այն, ինչ Ռուսաստանի այլ կարևոր պաշտոնյաների կողմից արդեն սավել է, ինձ համար ի չիք է դարձնում այս հայտարարությունը և լրիվ վերացնում նրա կարևորությունը:

- Հնարավո՞ր է արդյոք ՆԱՏՕ-ին տեսնել որպես միջնորդ Երևան-Անկարա հարաբերություններում:

- Չեմ կարծում, թե ՆԱՏՕ-ն այս պահին կարող է միջնորդ դառնալ այն առումով, ինչպես նշվեց: Ըստ իս, մենք կարող ենք խաղաղության համաձայնագրին մասնակցելու միջոցով ստեղծել մի մթնոլորտ, որտեղ երկրների միջև եղած խնդիրները կարող են լուծվել խաղաղ ճանապարհով: Չեմ կարծում, որ ՆԱՏՕ-ն կարող է կամ պետք է որևէ կերպ միջամտի այս հարցին:

- ՆԱՏՕ-ի ընդլայնումը եվրոպացիների կողմից նպատակ ունի՞ նվազեցնելու ամերիկյան ազդեցությունը դաշնակից երկրների մոտ:

- Շատ պարզ կախախախտման այս հարցին: Միանշանակ կասեմ՝ ոչ, բնավ այդպես չէ: Ըստ իս, տարբեր կառուցվածքների ընդլայնումը կստեղծի Եվրոպական միության և ատլանտյան հաստատությունների մի կառուցվածք: Վերջիններս Եվրոպայի ինտեգրացման ընթացքի մի մասն են կազմում, և այս տեսակետից երևույթները պետք է հասկանալ, տեսնել: Փաստորեն, նշված հաստատությունները պետք է բացել այն երկրների առջև, որոնք կցանկանան ավելի աշխույժորեն մասնակցել Եվրոպայի ճարտարապետության գործին, և այս պատճառով մենք պետք է այդ հաստատությունները տեսնենք կառուցողական տեսանկյունից:

- Ո՞րն է ՆԱՏՕ-ի համար ավելի առաջնային՝ մարդու իրավունքներն ու ժողովրդների ինքնորոշումը, թե երկրի սահմանների անվաստեղիությունը:

- Ըստ իս, հնարավոր չէ մեկին գերադասություն տալ մյուսի նկատմամբ:

- Պարոն քարտուղար, մինչև Երևան գալը Դուք եղել եք Թբիլիսիում և հանդիպել Վրաստանում Թուրքիայի դեսպանին: Արդյոք քննարկվե՞լ են Հայաստանին առնչվող հարցեր, մասնավորապես, թե ե՞րբ է Թուրքիան մտադիր վերացնել Հայաստանի շրջափակումը:

- Ոչ, Վրաստանում Թուրքիայի դեսպանի հետ ես չեմ խոսել այդ հարցի շուրջ:

- Կարո՞ղ եք մեզ տեղեկացնել վերջին իրադարձությունների մասին՝ կապված ՆԱՏՕ-ի և Ռուսաստանի հարաբերությունների հետ՝ «16+1» բանաձևի առնչությամբ:

- Ինչպես գիտեք, Ռուսաստանում մենք արդեն հաստատել ենք «16+1»-ը, ինչը նշանակում է, որ ռուսական ներկայացուցիչը պետք է հանդիպի Դաշինքի երկրների հետ: Դա մի շատ կարևոր առաջընթաց քայլ կլինի, և ուզում ենք արդեն խոսել 17-ի մասին՝ անդամ 16 երկրները, զուգարած Ռուսաստանը: Հույսով եմ, որ այս մեխանիզմը կընդունվի և կլինի միանգամայն

գործնական: Մենք պարտավոր ենք վստահություն ձևավորել, ինչը միայն բույլ կտա բարեխաղի հարաբերություններն ու մեր երկրների համար կասնել ավելի մեծ անվտանգություն:

- Ո՞րն է ՆԱՏՕ-ի դիրքորոշումը Կիպրոսի դեմ Թուրքիայի ագրեսիայի կապակցությամբ:

- Այս պահին չեմ կարծում, որ այդ օգտագործված բառերը համապատասխանում են իրավիճակին: Ինչպես գիտեք, ի տարբերություն Թուրքիայի և Հունաստանի, Կիպրոսը ՆԱՏՕ-ի անդամ չէ:

- Թուրքական կառավարությունը վերջերս հայտարարեց, թե այն պատճառով, որ Եվրոպական միությունը չի ընդունում Թուրքիայի անդամակցությունը, ինքը արգելափակում կդնի ՆԱՏՕ-ի ընդլայնման հարցում: Ի՞նչ մեկնարանություն կտար:

- Դա Թուրքիայի իրավունքն է: Ես երկար խոսակցություն եմ ունեցել Թուրքիայի վարչապետի հետ. այս երկիրը խնդիր կապում է Եվրոպական միությանը անդամակցության հետ: Ինչպես գիտեք, ներկա դրությամբ ԵՄ-ն Թուրքիայի հետ ունի միայն մաքսային միություն, և այդ համաձայնագրի հետ ստորագրվեցին նաև այլ արձանագրություններ, որոնք ֆինանսական օգնություն էին ենթադրում Թուրքիային: Մրանք, սակայն, առայժմ չեն հաստատվել Եվրախորհրդարանի կողմից: Ես չեմ կարող խոսել Եվրոպական միության և Եվրախորհրդարանի անունից, ասելով թե դա ինչ ընթացք կստանա: Ես միայն ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարն եմ:

- Երե ՆԱՏՕ-ի ընդլայնումը նպատակ ունի ամրապնդելու Եվրոպայի անվտանգությունը, ինչու՞ ՆԱՏՕ-ն չի պլանավորում նաև Ռուսաստանի ընդգրկումը: Չէ՞ որ Ռուսաստանը հզոր եվրոպական երկիր է, և նրա անդամակցությունը կուժեղացնի ՆԱՏՕ-ն ու անվտանգությունը:

- ՆԱՏՕ-ն բաց կազմակերպություն է: Չեք ուշադրությունը կուզեի իրավիճակը Դաշինքի հիմնական փաստաթղթի՝ Վաշինգտոնի համաձայնագրի 10-րդ հոդվածի վրա, որում շատ պարզորոշ սաված է, որ այն բաց կազմակերպություն է: Այսօրվա 16 անդամները նույնը չեն, որոնք ժամանակին հիմնադրեցին ՆԱՏՕ-ն. շատ անդամներ միացել են ժամանակի ընթացքում: Ինչպես ասացի, ՆԱՏՕ-ն ազատ կազմակերպություն է. և մենք կշարունակենք ընդունել նոր դաշնակիցներ: Կարևոր հարց է: Կուզեի ասել, որ այս պահին Ռուսաստանի իշխանությունները, ճիշտ է, որոշակի հետաքրքրություն ցուցաբերում են անդամակցելու համար, սակայն այստեղ դեռ շատ աշխատանք պետք է կատարել, այնպիսին, ինչպիսին մենք անում ենք Բոսնիայում:

Կցանկանայի ձեզ հաղորդել որոշակի անձնական փորձ, ինչը, ըստ իս, շատ ավելի արժեքավոր է ամեն տեսակի հայտարարությունից, որը ես կարող եմ անել: Բոսնիայում, ինչպես գիտեք, ՆԱՏՕ-ն 17 այլ պետությունների հետ, այդ թվում՝ Ռուսաստանի, ուզում է հասնել խաղաղության: Այն, ինչ մենք տեսնում ենք Բոսնիայի միջանցք կոչվող մասում, որը Բոսնիա-Հերցեգովինայի շատ նուրբ տարածքներից մեկն է և որը հսկվում է ամերիկացի, ռուս, լեհ, ֆրանսիացի, իսպանացի զինվորների կողմից, դժվար պատկերացնելի է: Կարո՞ղ եմ արդյոք բոլորը՝ ռուսները, գերմանացիները, ամերիկացիները, ֆրանսիացիները և այլք, ռիսկի ենթարկելով իրենց կյանքը փորձել հասնել խաղաղության Եվրոպայի մի փոքրիկ մասի համար: Սա շատ ավելի կարևոր է՝ համեմատած այն բաների հետ, ինչ մենք անում ենք իրականում խաղաղություն ստանալու համար: Եթե մենք պատրաստ ենք համագործակցելու, եթե պատրաստ ենք միասին խաղաղություն ապահովելու, ինչու՞ չենք կարող դա անել նաև քաղաքական մակարդակի վրա:

(շարունակությունը էջ 6)

«ՆԱՏՕ-ն չունի որևէ հրաշագործ լուծում ո՛չ այս տարածաշրջանի, ո՛չ էլ ողջ Եվրոպայի հիմնախնդիրների լուծման համար:»

Եկեք հուսանք, որ այն կառուցվածքը, որը մենք ուզում ենք միասին ստեղծել, ի վիճակի կլինի հասնելու փոխորդունման, այնպես, որ խաղաղության, համերաշխության, գործնական համագործակցության կառուցողական գործընթացը շարունակվի:

- *Ինչպե՞ս եք տեսնում Լեռնային Ղարաբաղի հսկամարտության լուծման հարցը:*

- Իմ գրպանում չունեն այդ լուծումը, այդ իսկ պատճառով չեմ կարող այն ձեզ միանգամից տալ:

- *Դուք խոսում եք Եվրոպայում անվտանգության մասին: Ի՞նչ բջնամիներից է ՆԱՏՕ-ն փորձում պաշտպանել եվրոպական երկրները:*

- Շատ լավ հարց է: Բարեբախտաբար եվրոպական դաշնակիցները չունեն որևէ բջնամի, ինչը շատ բարեհաջող փաստ է: Միակ բջնամի, որին մենք կարող ենք, թերևս գտնել, դա այն անկայունություններն են, որոնք կարող են ստեղծվել Եվրոպայում կամ նրա ծայրամասերում: Ոչ որ չգիտեր, որ Բոսնիան կարող էր պայթել: Մի պահ պատկերացրեք, որ առանց ՆԱՏՕ-ի շատ վայրերում սկսվեն Բոսնիայի նման հսկամարտություններ և դրանք հանկարծ տարածվեն մյուս տարածաշրջաններում: Հիշեք, ինչպիսին էր այս հսկայական հսկամարտության պատմությունը. 1995 թվականի դեկտեմբերին առաջին անգամ ՆԱՏՕ-ի ուժերը՝ 16 երկրներից, տեղափոխվեցին Բոսնիա՝ իրենց հետ խաղաղություն բերելով:

Կարող եք ասել, որ խաղաղությունն այստեղ բնորոշվում է պատերազմի բացակայությամբ: Դուք միանգամայն ճիշտ կլինեք: Փաստորեն, այստեղ պետք էր վերակառուցել երկիրը, բարոյական վերականգնում, իրականացնել նոր քաղա-

քական հաստատություններ ձևավորել, մարդկանց հնարավորություն տալ շարունակել ապրել խաղաղության պայմաններում: Մեզ պետք է բաժանել նրանց, ովքեր կոչվում են և հնարավորություն տալ նրանց, ովքեր մասնակցում են վերակառուցման ընթացքին, գործը հաջողությամբ իրականացնել: Դա բավականին դժվար է: Բարոյական վերակառուցումը նման երկրի համար, որը բարոյապես, քաղաքականապես տարանջատվել է, դա մի շատ բարդ գործ է: Կարծում եմ, եթե մենք դրանում հաջողենք, ուրեմն միջազգային հաստատությունները նույնպես կհաջողեն: Բայց մի բան պետք է միշտ հիշել. առանց պատերազմը կանգնեցնելու անհնար կլինի սկսել վերակառուցում և վերականգնում:

- *Եթե ԵԱՀԿ-ի խաղաղարար ուժերը տեղադրվեն Լեռնային Ղարաբաղում, ի՞նչ դեր դուք կտեսնեք ՆԱՏՕ-ի համար այդ հսկամարտության մեջ:*

- Ուզում եմ այստեղ շատ պարզ ասել, որ ՆԱՏՕ-ի գործողությունները խաղաղության հաստատման մեջ, ճիշտ այնպես, ինչպես մենք անում ենք Բոսնիայում, հնարավոր է միայն ԵԱՀԿ-ի կամ ՄԱԿ-ի մանդատով: Միայն ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդի կամ ԵԱՀԿ-ի որոշումներից հետո է ՆԱՏՕ-ն կարող միջամտել: Նախ և առաջ, որոշում պետք է ընդունեն ՄԱԿ-ն ու ԵԱՀԿ-ն:

- *Արդյո՞ք Լեռնային Ղարաբաղին կընդունեք ՆԱՏՕ-ի անդամ, և եթե այո, ապա ե՞րբ:*

- Ինձ համար շատ ավելի հեշտ կլինի միանգամից ասել ոչ և դրանով իսկ ազատել ինձ երկրորդ հարցին պատասխանելու դժվարությունից:

ՀԻՆԳՇԱԲԹԻ, ՍԱՐՏԻ 6-ԻՆ

ՀՀ-ՈՒՄ

ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ
ԴԵՍՊԱՆ



ԱՆԴՐԵՅ ՈՒՌՆՈՎԸ

ներկայացնում է

«ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.
ՈՐՈՇ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ»

Մարտի 6-ին, ժամը 18:00

Հայաստանի ամերիկյան համալսարանի
փոքր դահլիճ

Հասցեն՝ Երևան, Բաղրամյան 40
Հեռ. 27-16-58

Մուտքն ազատ է



ԲԱՆԱԽՈՍ

«Գասախոսությունների շարք» ծրագրի
տեղեկագիր

Ծրագրի ղեկավար՝
Վարդան Օսկանյան
Տեղեկագրի համակարգող՝
Հրայր Զորյան
Համակարգողի օգնական՝
Անուշ Եղիգարյան
ՀԴԲ ծրագրերի համակարգող՝
Մազդա Աղաբաբյան
Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40
հեռ. 27-16-58
տպաքանակ՝ 99

Հասցեատեր՝